

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի սեպտեմբերի 24-ից հոկտեմբերի 2 օրերին, Ամենայն Հայոց Հայրապետի հրավերով, Նրա գահակալության 27-րդ տարեդարձի առթիվ, Մայր Աթոռ այցելեց Անտիոքի և Համայն Արևելքի Ասորական Ուղղափառ Եկեղեցու պետ Նորին Ամենապատվություն Տ. Իգնատիոս Զաքքա Ա Պատրիարքը իր շքախմբով: Շքախմբի կազմում էին պատրիարքական փոխանորդ Մար Սևերիոս Իսհակ արքեպիսկոպոս Սաքան և Պատրիարքի քարտուղար Ռաբբան Բենժամին վարդապետ Ժոզեֆը:

Սեպտեմբերի 24-ին, երեկոյան ժամը 19-ին, Սուրբ Էջմիածնի Մայր տաճարում, քույր Եկեղեցու պետի ժամանման առթիվ, ողջույնի և բարիգալստյան խոսքեր փոխանակվեցին Ամենայն Հայոց կաթողիկոսի և Ասորական Եկեղեցու գահակալի միջև:

Սեպտեմբերի 26-ին, կիրակի օրը, Մայր տաճարում մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ, որին ներկա եղան երկու Հայրապետները, որոնք փոխանակեցին եղբայրական սիրո և գնահատանքի ճառեր: Հավարտ պատարագի Վեհարանի սեղանատանը, ի պատիվ Ասորական Եկեղեցու հոգևոր պետի, տրվեց պաշտոնական ճաշկերույթ:

Մայր Աթոռում կեցության օրերին Տ. Իգնատիոս Զաքքա Ա Պատրիարքը և նրա շքախմբի անդամները այցելեցին Ս. Հռիփսիմե, Ս. Գայանե, Ս. Շողակաթ, Ս. Գեղարդ և Ս. Խորվիրապի վանքեր, Երևանի Ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցի, Ծիծեռնակաբերդի Հայ նահատակաց հուշարձան, Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց Մատենադարան, ինչպես նաև Երևանի տեսարժան վայրերը:

Մայր Աթոռի մեծարգո հյուրի պաշտոնական այցելության առթիվ երկու քույր Եկեղեցիների պետերի և նրանց շքախմբի անդամների միջև Վեհարանում և «Հայկաշեն»-ում տեղի ունեցան խորհրդակցություններ էկումենիկ ոգով, հառավել ամրապնդում երկու Եկեղեցիների գործակցության:

Սեպտեմբերի 27-ին Տ. Իգնատիոս Զաքքա Ա Պատրիարքը այցելություն տվեց Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհուրդ:

Հոկտեմբերի 2-ին, շաբաթ օրը, առավոտյան, Տ. Իգնատիոս Զաքքա Ա

Պատրիարքը գոհունակ սրտով և լավագույն տպավորություններով հրաժեշտ տվեց Հայոց Հայրապետին և մեկնեց իր աթոռանիստը՝ Դամասկոս:

Ասորական Ուղղափառ Եկեղեցու Սրբազան Պատրիարքի սույն այցելությունը Մայր Աթոռ մի նոր լուսավոր էջ ավելացրեց երկու քույր Եկեղեցիների միջև գոյություն ունեցող դարավոր եղբայրական հարաբերությունների պատմության մեջ:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
2 հոկտեմբեր 1982 թ.